

ՅԵՌԱԳԻՐՆԵՐ

Ապրիլեան նույնի վարսունամեակին առիթով, Ա. Արուեյս Պատրիարքաթի ստացած է հետևեալ պաշտօնական հեռազիրները . . .

Հայոց Ամեն. Պատրիարքին և

Հայ Համայնքին

Կը խնդրեմ որ բնդունիք մեր անկեղծ զգացումներն ու մասնակցութիւնը Հայ Համայնքի վիշտին, ի յիշատակ այն մեծ ողբերգութեան՝ որ Հայութեան մեծ ժամանակին բնաջնջումը։ Հայկական ողբերգութեան հանդէպ յուռաթիւնը և զայն կանխելու անկարողութիւնը առաջնորդեցին ուրիշ Հարք մը ոճիրներու, ինչպէս Եւրոպայի մէջ վեց միլիոն Հրեաներու բնաջնջման, ու մինչև այսօր փոքրամասնութիւններու և փոքր ժողովուրդներու Հանդէպ շարունակուող դաժանութիւններուն և բնաջնջումին։ Հայութեան բախտակից Հրեայ ժողովուրդը միշտ օգնութեան ձեռք պիտի կարկառէ՝ Հայ ժողովուրդի և անոր դարաւոր մշակոյթի վերականգնումին։

Տ. Ք. ԶԵՐԱՀ. ՎԱՐՀԱՅԹԻԿ

նախկին Նախարար և ներկային
անդամ Խորայէլի Խորհրդարանին

Ն. Ամենապատուութիւն

Եղիշէ Արքեպոս. Տէրտէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ

Զեղի և Զեր Կղբայրներուն Հետ Ենք՝ Զեր Ժողովուրդին բաժին ինկած ահաւոր սարսափներու յիշատակի այս օրը։

ՆէֆԱնէլ. 1012

Խորայէլի Խորհրդարանի Ընդհանուր

Քարտուղար

2 Մայիս 1975

Գերաշնորհ

Տ. Շահէ Արքեպոս. Ամէմեան

Հայոց Պատրիարքարան

Երուսաղէմ

Գերաշնորհ Արքագան,

Ինձի պարտականութիւն տրուած է Հաղորդելու Զեղի, թէ Երուսաղէմի Քաղաքային Խորհուրդը իր վերջին նիստին Հայ ժողովուրդին Հետ իր համակամութիւնն ու Համակրանքը արտայալուց՝ Հայկական ցեղասպանութեան վաթունամեակին առիթով։ Քաղաքային Խորհուրդը միաձայնութեամբ որդեպեց Քաղաքասկան Վահեմ. Քուլէքի Հեռազրին պարունակութիւնը՝ ուղղուած Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին։ ԱՀաւասիկ այդ Հեռազրիը.

Ն . Ամենապատուութիւն
Եղիշէ Արքեպոս . Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ

Սարսափիլի յիշատակներու այս տխուր օրը , Զեր ժողովուրդի տառապանքներուն համար , արտօնեցէք որ Զերդ Ամենապատուութեան արտարայտեմ մեր ալ մասնակցութեան զգացումները՝ յանուն Երուսաղէմի բնակիչներուն և մասնաւրաբար Հրեաներուն՝ որոնց ճակատագիրը յաճախ այնքան նմանեցաւ Հայերու բախտին :

Յուսանք որ Զեր և իմ ժողովուրդներու տառապանքները անցեալին միայն պատկանին և երբեք չկրկնուին :

Առնարհարար Զերդ ,
Թէ՛Տի ՔՈՂՂԵՔ
Քաղաքապետ Երուսաղէմի

Ապա Քաղաքային Խորհուրդի բոլոր անդամները մէկ վայրկեան լոռութեամբ Հայ նահատակներու յիշատակը յարգեցին :

Անկեղծօրէն Զերդ ,
ԹԱՄԱՐ ԿՈՂԱՆ
Արտաքին գործերու օգնական
ՎԱԵԼ . Քաղաքապետին

Ն . Ամենապատուութիւն
Եղիշէ Արքեպոս . Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ

Կը ցաւիմ որ Ամրբիւն յիշատակի պատարագին ներկայ պիտի չկարենամ զտնուիլ՝ չնախատեսուած կարեւոր գործի մը պատճառաւ :

Կը խնդրեմ որ ընդունիք համակրանքի անկեղծ զգացումներս Զեղի և Զեր համայնքին համար :

ՄԻՔԱՅԻԼ ՔԼԱՅՆ
Փոխ-Տնօրէն Քրիստոնեայ համայնքներու
քածինի
Կրօնից Նախարարութիւն

Ն . Ամենապատուութիւն
Եղիշէ Արքեպոս . Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ

Հայկական ցեղասպանութեան վաթունամեակի տխուր առիթով , երբ մէկուկէս միլիոն Հայեր բնաջնջուեցան , մենք , կեթթոներու բարթիզաններս և կռուողներս , հականացի կռուողներու և նացի ճամբարներու բանտարկեալները՝ ուր մէր մէկ-երբորդը բնաջնջուեցաւ Երկորդ Համաշխարհային Պատերազմի բնթացքին , կը փափաքինք բոլոր ժողովուրդներուն մաղթել երկար կեանք , խաղաղութիւն և բարի դրացնութիւն :

ԿՕՏՖՐԻՑ ԲՈԼԹԻՄ
յանուն հականացի կռուողներու
միութիւններու յանձնախումբին և նացի
նամբարներու նախկին բանտարկեալներուն